

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2019 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Մարզպետը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2019 թվականին մարզպետի կողմից ընդունվել են 61 որոշումներ և 156 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 267 հրամաններ:

2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 8246 և ելք են արվել 6981 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների հետ:

Մարզպետարանի աշխատակազմում 2019թ դեկտեմբերի 31-ի դրությամբ թափուր են մարզպետարանի՝ 2 վարչական, 8 քաղաքացիական ծառայողների պաշտոնների հաստիքներ:

Սահմանված կարգով, տարբեր ծրագրերով ՀՀ վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից իրականացվել են քաղաքացիական ծառայողների վերապատրաստման աշխատանքները, ըստ որի մասնագիտական վերապատրաստում անցան թվով 15 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի ստորաբաժանումները մեծ ուշադրություն են շ դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկմանը, ուսումնասիրմանը և լուծմանը: 2019թ հունվարի 11-ի թիվ 1 որոշմամբ մարզպետի և ազգաբնակչության անմիջական կապը ամրապնդելու նպատակով ամենամսյա ընդունելությունները իրականացվում են համայնքներում, իսկ բարձրացված խնդիրները ուսումնասիրվում են տեղում: 2019 թվականին մարզպետի մոտ կատարվել է 1060 քաղաքացիների ընդունելություն:

Տարվա ընթացքում ՀՀ Նախագահի ու վարչապետի աշխատակազմից, ինչպես նաև հանրապետական գործադիր իշխանության մյուս մարմիններից ստացվել ու ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 61 դիմումներ, որից՝ 9-ը ստացվել են Ջերմուկի, 21-ը Վայքի, 31-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2019 թվականին 757 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 13 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր,

իսկ 32-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

2019 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 1060 քաղաքացիներ, որից՝

1. Դրամական օգնություն	757
2. Նպաստի հարցերով	22
3. Հողային վեճեր և սահմանների ճշտում	26
4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	25
5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	53
6. Աշխատանքի տեղավորման	13
7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	5
8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	13
9. Պետ.պատվերով բուժօգնություն	32
10. Որդեգրման/երեխային մանկատնից վերադարձնելու/ և ներառական կրթության մեջ ընդգրկելու հարցերով	36
11. Կրթության և ՆՈՒՀ-երի հարցերով	12
12. Այլ հարցերով	66

Աշխատակազմի քարտուղարության պետ՝

Հ. Կարապետյան